

ղեզրին հաւաստման համաձայն, հայերը մսէ աւելի ձուկ ու ձկնկիթ կ'ուտեն, պահոց չըջանին մասնաւորաբար:

Կ. Պոլիս հայու մը մասին կը պատմէ սա մանրավէպը. «Հայ մը զիպուածով հեծեալ կ'անցնի զրօսնող Անգլիացի պարոններու քովէն, որոնք զինքը կը հրաւիրեն կոնծելու: Հրաւիրողը ծանօթ էր հայուն, որ ձիարոյժ մըն էր եւ հրաւիրողին ձին խնամած էր: Հայը ձիէն կ'իջնայ՝ նժոյզը ցանկապատին կապելով: Բոլորն ալ ուրախ, կը ցանկան հայը եւս ուրախացնել, իսկ իրենցմէ մէկն ալ հայուն ձիուն պոչը կը կտրէ: Հայը ատիկա չի նշմարեր, մինչեւ վերստին ձի հեծնալը երբ կը տեսնայ, կը դանգատի ու բարձրաձայն կը գոչէ՝ իմանալ ուզելով, թէ իր ո՞ր ոճիւրին համար իր նժոյզը այդպէս անչնորհուած էր, եւ մէկ խօսքով, ձին հեծնալ կը մերժէ, իսկ այն պարոնը, որ այդ խաղը խաղացած էր, կը ստիպուի իր ձին տալ անոր»⁵⁰⁾:

Հեղինակը անշուշտ կ'ուզէ շեշտել թէ արեւելքցիներուն եւ հայոց համար ձիու ազին կտրելը մեծ անպատուութիւն է:

50) Անդ՝ էջ 70:

Ուղեղիւրը կ'իմացնէ, որ Չէրքէզներու կրօնական սովորութեանց մասին իր տեղեկութիւնները տացած է «յոյներէ եւ հայերէ, մասնաւորաբար վերջիններէն, որոնք յարարերած են չէրքէզներու հետ եւ անոնց կրօնական արարողութեանց ներկայ եղած»⁵¹⁾: Կ'աւելցնէ որ Չէրքէզները մոսկոֆներուն, վրացիներուն, մինկերէններուն եւ հայերուն հետ յարարերողները «որդեզրած են շատ մը յոյն եւ հայ արարողութիւններ, եւ անոնցմէ ոմանք նոյնիսկ մկրտուած են (քրիստոնեայ)»:

Գալպաղան հաղիւ կարելի է քաղաք կոչել իր խեղճ տուներով: «Բնակիչները հայեր, յոյներ, քանի մը հրեաներ, նոյայիներ, չէրքէզներ եւն. եւն.»⁵²⁾:

Ուղեղիւրը կը յիշէ նաեւ, որ Դանուրի թրքական մասին վրայ ի Նիկէպոլիս կային հայեր: Իսկ Ռուսճուզի մէջ հայերը ունէին եկեղեցի մը:

Այս է ամբողջութիւնը հայոց մասին այս ուղեգրին տուած տեղեկութեանց:

51) Անդ՝ էջ 74:

52) Անդ՝ էջ 77:

